

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Գ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հասր 10 փարայ է : — Պօլիս բաժանորդ բլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիա պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 զրշ, դարձեալ 100 թուոց համար , ի զի ստարութեան ծախքէ ազատ բլլալով : — Մանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Կրագրի ս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ վարի դրանը կից Նոր Գրատունը :

Ա. Չ. Բ. Ա. Յ. Ի. Ն.

Էրզրումէն ուրախութեամբ կիւ մացուենն թէ՛ շնորհիւ բարեխնամ կառավարութեան գանուեր են Մշջ Ս. Յովհաննէս վանքէն կողպատուած անօթներէն 90 կտոր արծաթ խաչ և կանդեղներ :

— Խառն Ժողովոյ որոշմամբ , երկու շաբթի օրը Պէշիկիթաշի վարժարանին վիճակը քննելու պիտի երթան Սէթեան և վարժապետեան սրբազանները և Օսեան վեսմաշուք Գրիգոր էֆէնտին և Նորատունկեան մեծապատիւ Յակոբիկ էֆէնտին :

Կյուսամք որ այս արժանապատիւ քննչաց միջոցաւ վարժարանին իրական վիճակը յայտնուելով , փութան ջան անօրինութեան արժանիքը կը ճանչցուի : Կյուսամք նաև որ յիշեալ արժանապատիւ քննիչները ուշադրութեան կառնուն նաև այն անցքերը , որ վարժարանին դոցուերուն առթիւ ծագեցան Պէշիկիթաշի մէջ և կասատուն ու կպատժուին այն զըռեհիկ վարմունքները որ մէկ քանի տարւոց կամ անձանց միջոցաւ գործադրուեր են , որոնք ամեն ողջամիտ

ազգայնոց զայրոյթ պատճառաւ են :

— Խառն Ժողովը առժամանակեայ յանձնաժողով մը կազմեց , կտակաց և կալուածոց քննութեան ու հրահրութեան համար : Այս մասին ուրիշ առթիւ պիտի խօսինք :

— Աղթամարայ խաչատուր եպիսկոպոսի կաթողիկոսութեան դէմ բողոքոյ և նոր քննութիւն խնդրալ խումբ մը Աղթամարցիք երէկ հանրագրով մը խառն Ժողովոյ ներկայացած բլլալով , Ժողովը պատուիրէր է անոնց որ երկու հակառակ կուսակցութիւններէ Յական հողի Ժողովին ներկայանան , որպէս զի Աղթամարայ կաթողիկոսական նոր տեղապահ մ'ընտրուի մինչև զվերահաստատութիւն սահմանադրութեան :

— Ամեն Տեղապահ սրբազանը երէկ չկրցաւ նօսադահել խառն Ժողովոյն , անձնական տկարութեան պատճառաւ :

— Կրտմք թէ Խառն Ժողովոյ մէջ խօսք կրկայ , կոյսերական կառավարութեան 2000 լիւրացի փոխառութիւն մ'ընել յանուն ազգին , եօթը տարիէն վճարելու պայմանաւ :

Մանգուժէ օրագրոյն 888րդ թը-
ւոյն մէջ Նիկովիզիայէն մեր օրագրոյն
273րդ թուոյն պատասխանն ըլլալու
համար բաւական ստորագրութեամբ
նամակ մը հասած ըլլալը կիմանամք :

Մենք ալ համառօտիւ կպտասա-
խանենք :

Ա:—Թէ՛ Նիկողոս եպիսկոպոսի թե-
լաղրութեամբ Նիկովիզիոյ հանրա-
գիրն ստորագրուած է արդեօք . թէ՛
Նիկողոս եպիսկոպոսը վանքին ու վի-
ճակին իրարմէ զատուած ըլլալէն վը-
նասներ չունի՞ արդեօք, և այլն : Այս
մասերուն վրայ երկար խօսիլ չեմք
ուզեր, բայց Պ. նամակագիրներուն
կիմացունեմք թէ՛ ի Պօլիս թախտա
գալէ բուռած տեղը Տէմիրթաշ խանի
մէկ սենեակին մէջ, Նիկողոս եպիս-
կոպոսին նախագահութեամբ ժողով
մ'եղած է, ուր հանրագրութեանց
վրայ, և այլն, և այլն, բաւական խօս-
քեր եղած են : Թո՛ղ մեզի չտախտեն
որ այն խօսքերը հրատարակենք :

Բ:—Արդեօք Արմաշի հարստու-
թիւնը Նիկովիզիայ մէջ որո՞նց կոկոր-
դը մտած է, կուզեն եղեր գիտնալ
նոյն նախակն ստորագրողները : —Աս-
կէց 4—5 տարի յառաջ Նիկովիզիա-
յէն Արմաշ գացող յանձնաժողովին
անդամներէն պատուաւոր անձի մը
վկայութենէն իմացած եմք որ Արմա-
շի ստակէն ասոր անոր կոկորդը մը
նայած կայ : Եթէ Պ. նամակագիրք
չեն ուզեր հաւատալ մեր խօսքին,
նոյն յանձնաժողովին ստամարին մէկ
օրինակն ալ կարծեմք Նիկովիզիա կը
գանուի, թո՛ղ բանան զայն, և անոր

վերջը Արմաշի ոչնչացեալ առնելիքին
ցանկին մէջ նային, որպէս զի իմանան
թէ Արմաշի գրամները որոնց կոկոր-
դէն անցած և ստամարսին մէջ մար-
սուած են :

Գ:—Գալով իբրև շուպյութիւն
կամ զեղխութիւն ցուցուածներուն,
կերևի թէ՛ Պ. նամակագիրք ամենե-
ւին Պօլիսը տեսած ըլլալու չեն, որ-
պէս զի ոտքը ուրիշ և կրնակը վարշափ
մուշտակ և ձիով կամ կառքով երթե-
ւեկող եպիսկոպոսները տեսնեն . . . :
Ասո՞նք են եղեր Արմաշի միաբանից
զեղխութիւնները : Եթէ Նիկովիզիա-
ցւոյ աչքին զեղխութիւն երեցած
բաները իրօք ալ տեղի ունեցած ըլ-
լան, մեր աչքին մեծ բաներ չեն ե-
րևար՝ այնպիսի արդիւնաւոր և դար-
ձունեայ վարդապետաց վրայ ըսուած
ըլլալով . մինչդեռ ուրիշներ կտեսնենք
որ հագած կօշիկնին անդամ չեն ար-
ժեր : Մենք կիտախարինք որ մեր կը-
ղերականք մանաւանդ արժանաւոր-
ները իրենց արժանի վայելչութեամբ
երևան ընկերութեան մէջ :

Դ:—Խակտորահնար գիտարկին հա-
մար կիմանանք որ հանգուցեալ վա-
նահօր օրով միաբանութիւնը այդպի-
սի բան մը մտածեր է գիւրատար և
գիւրագին ըլլալուն համար (ասիկա
մէկ փոքրիկ ասպոցոյց մը կրնայ ըլլալ
Արմաշի միաբանութեան զեղխ չըլ-
լալուն) : Սակայն քիչ ժամանակէն
անցարմար դատուելով գործածու-
թիւնը դադրած է : Խալիփին շինու-
թիւնը Պօլսոյ մէջ մէկ քանի անձերու
յատուկ եղած է : Գուրսերը դըր-
նուող վարդապետաց և քահանայից
կարելի է՝ մեծազոյն մասը այդ Խա-
լիփէն զուրկ ըլլան . ինչպէս Պօլիս պան-

գրխտող անաստատային քարդապետ-
ներ կտեսնեմք, և ուրիշներն ալ Պօ-
լիս սօք կոխածնուն պէս կփութան
խալփի շինել տալու : Սակայն նորա-
հնար զլիսարկ գործածող քարդապե-
տի մի համար զայրացող սիրտերը արդ-
եօք ի՛նչ պիտի զգան երբ «Երե, բան-
բան և ֆե» հապտող եպիսկոպոս յե-
մը զեմերնին տեսնեն . . . :

Կուզե՞ն Պ. նամակադիրք որ այս
եպիսկոպոսին անունը տանք :

ԽԱՆԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ճարաձայնութիւն մը կարողութի
կրօնէ Լէվրնթ Հերրլա, թէ պարնան
մէջ Տօրնա—պահչէի պալատը պարա-
հանդէս մը պիտի տրուի : Այս հան-
գէտը որ առաջին անգամ տեղի պի-
տի ունենայ, օտարազգի քաղաքա-
կան պաշտօնէի մը առաջարկութեամբ
բնն է եղեր :

—Փարիզէն գրուած նամակէ մը
կիմանանք թէ, Սբօրասեան կրկեաց
պատգամաւորները՝ որոնք չորս հազի
են, գաղղիացի պաշտօնակալաց գրու-
ները ախաւեր են, օտմանեան կառա-
վարութեան իրենց վրայ դրած տուր-
քին գէմ գնդատելու և անոնց բար-
ձու մը աղաչելու : Բայց տեղ մ'ալ չեն
ընդունուեր :

—Անցեալ երեքշաբթի օրը տաճ-
կաց տարեգլխին շնորհաւորութեան
առթիւ, Բ. Գրան պաշտօնեսացք և
զլիսաւօր պաշտօնատարք բարձր.
Մեծեպարքոսին ներկայացան : Նոյն
օրը արտաքոյ կարգի նիստ մ'ըրաւ
չորացի—տէվէթը, որուն ներկայ
գանուեցաւ ներքին գործոց պաշ-
տօնեսայն ալ :

—Պաշտօնէից ժողովը հինգ-
շաբթի օրը Բ. Գուռը սովորական նիս-
տը ընելէն վերջը՝ կրկին նիստ մ'ըրած
է նոյն երեկոյցին, կրէ Լա թիւրքի,
բարձր. մեծեպարքոսին ապարանքը
ի Պէպէք :

—Սըրպի բրիտանական ընդհա-
նուր հիւպատոս անուանուեր է Պ. Լօնկ-
վօրթ :

—Քաղաքացի բրիտանական փոխ
հիւպատոսը Պրուսացի հիւպատոս ընա-
րուեր է :

—Եւրոպական լրագրաց նայելով՝
կրտուեր թէ Թուրնի նաւահանգիստը
դանուող զրահաւոր նաւերուն հրա-
ման եղած է որ մայիս 1ին պատրաստ
ըլլան գուրա ելլելու : Այս լուրը Բաթ-
րի անտոյց համարելով կրտէ թէ ձը-
մեռ ատեն պատերազմական նաւերը
նաւահանգստին մէջ փակուած ըլլա-
լով, ամառ ատեն կըրջին ծովերը .
ասի սովորութիւն մը ըլլալուն, այս
պիսի հրաման մը և ոչ մէկ կարծեաց
կրնայ տեղի տալ :

—Քուպա կղզիէն առնուած լու-
րերը հակասական են . իրաւ է թէ
Տիւրքի զօրապետը պաշտօնական գը-
րութեամբ մը խմայուցած էր որ այս
կղզիին մէջ ապստամբութիւնը օրէ օր
սուրբանալու վրայ է, սակայն այս կղզ-
իէն եկած լուրերը ասոր հակառակը
կհաստատեն : Վասն զի Հալանէն որ
Քուպայի մէկ քաղաքն է, եկած գը-
րերը կհաստատեն թէ տեղւոյն բը-
նակիշները գաղթելու սկսած են և
թէ յունվար մէկէն մինչև մարտ մէկ
15,000 անցադիր արուեր է : Սպանիոյ
կառավարութեան կողմանէ զրկուած
մթերքը ապստամբք ձեռք ձգեր են .
և շոգենաւ մ'ալ փետր . 16ին մարդ,

զէնք և սպաներազմական մթերք բերեր է զուար կղզին :

—Անցեալ ուրբաթ 80 տարեկան ծեր մը մղկիթ երթալու ատեն՝ երկու ձիաւոր՝ ձիերնին վազցնելով գետինը կտապալեն զանի : Ծերունուն զլուխը չարաչար կլիկաւորի և չորս ժամ մաւրած կմնայ : Սոյնպիսի դէպք մ'ալ հին կամուրջին վրայ կպատահի, երբ խեղճ կին մը իւր 5—6 տարեկան զուկին ձեռքէն բռնած կերթայ եղեր : Կնոջը երեսը կլիկաւորի, բայց ալ զուն քնաս մը չլլայար :

—Պենկալայի Հնդիկ Նապապը որ իւր արդուն հետ Փարիզ դացեր էր՝ անկէց ալ Մնզդիա երթալու համար, հետաքրքրութեամբ ընդունուեր է Փարիզի ժողովուրդէն : Նապապին Փարիզ մտած օրը խոսն բազմութիւն զինքը աննկելու ելեր է : Նապապը, կըսեն, ծանրագին քարերով զարդարուած զգեստ մը հագած էր, որ կարծէ եղեր 200,000 Ֆրանկ . թմո՛ղ այն թանկագին քարերը եւ ձեռքի սպարանջանը Բանկոնը զարդարեալ է եւ վրան փիղ մը կայ եղեր, որուն աչքերուն տեղ 94,000 Ֆրանկի արժողութեամբ քարեր դրուած են եղեր : Ոտքը կերպասի վրայ բանուած կօշիկ մը հագած է եղեր, եւ ծնկակաղներուն վրայ թանկագին զմբուխա մը կայ եղեր : Անդղիոյ զեսպանաւան մէջ ճաշի հրաւիրուած ըլլալով՝ բերանը բան մը չէ գրած, իւր կրօնքին համեմատ՝ որ կարգելու ուտել իրենց սովորութեանը համ' մտտ չպատրաստուած կերակուրները : Անգանին միայն ներկայ գտնուեր է, եւ կերակուրներուն վրայ միայն կնայի եղեր, երբ իւր աջնէն կանցնէին : Այս Նապապը, կըսեն, հաց ուտելու ատեն աթոռի վրայ չնստիր, այլ արեւելեան հին սովորութեան համեմատ պողպատ կնստի եւ ծնկին վրայ կըսնէ եղեր սկաւառակը :

—Ս. Յրանչիակոս քաղաքէն գրուած

նամակ մը հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնը կուտայ Չինացոց թագման արարողութեանը վրայ :

«Չինացիք՝ ուսկից խիստ շատ կը բնուին այս քաղաքիս մէջ, երբ մեռեալ մը ունենան, մեռելին տանը սեւակին վրայ խել մը կարմիր թուղթեր կձգեն՝ վրան իրենց սրբազան զրքէն իմաստուն խօսքեր գրելով : Երբ գերեզմանատուն կհանին, հոն իրենցմէ մէկը լուրջ կերպարանօք քիչ մը վերը ըսուած թուղթերէն չորս կողմը կձգէ : Յետոյ կթաղեն մեռեալը, եւ գերեզմանին վրայ խորոված հաւ, բրինձ, զինի թողլով կաննեն կքալեն յուղարկաւորք, անոնց ետեւին նայելու, վասն զի այնպէս համոզուած են թէ մեռեալը պէտք է որ ոյժ առնէ աս ուտելիքները ուտելով : Յակայն վայրենի Ամերիկացիք՝ որոնք Չինացոց այս սովորութիւնը խիստ աղէկ գիտցած են, յուղարկաւորք երթալուս պէս պահուած տեղերնէն դուրս կելլեն, եւ բոլոր ուտելիքը կսպառեն անոնց մեռեալին ձգելու, որ իրեն կարեւոր եղած ոյժը առնէ : Քանի մը ամիսէն ետքը Չինացիք նորէն կուգան, ոսկորները դուրս կհաննեն կլուան, անուշահոտ խղով կօծեն, եւ սպա ծրար մը ըրած մասնաւոր սենեակներու մէջ պահել կուտան : Երբ այս ծրարները շատնան ամենը կլուենն նաւով մը Չինաստան կը վրկին : Աերջին օրերս ալ 400 ծրար բեռցած նաւ մը Չինաստանի մէկ նաւահանս գիտաը գնաց » :

Գաղղիարէն և Լատիներէն լեզուները սովորել ու զարգեցնելու համար վրկայեալ դասատու մը պատրաստ փրկանուի, Բերա Սըլլի պաշտօնատան մօտ Մէքթեպ վարչոյ թիւ 20 :

ՏԵՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ
Հ. Ս. Ա. Ա. Ճ. Ա. Ճ. Ա. Ճ.
ՏԵԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԲԻՐԵՅՆԵՆ